«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի իմաստով ո՞րն է համարվում ապօրինի ծագում ունեցող գույք.

1. գույք, այդ թվում՝ մեկ միավոր գույք, մի քանի միավոր գույք կամ մեկ միավոր գույքի բաժին, որի ձեռքբերումը «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով չի հիմնավորվում օրինական եկամուտներով, որը ձեռք է բերվել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, դրա մեջ չի ներառվում այդպիսի գույքի օգտագործումից ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները),
2. գույք, այդ թվում՝ մեկ միավոր գույք, մի քանի միավոր գույք կամ մեկ միավոր գույքի բաժին, որի ձեռքբերումը «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով չի հիմնավորվում օրինական եկամուտներով՝ անկախ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ կամ հետո ձեռք բերված լինելու հանգամանքից, ինչպես նաև այդպիսի գույքի օգտագործումից ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները),
3. գույք, այդ թվում՝ մեկ միավոր գույք, մի քանի միավոր գույք կամ մեկ միավոր գույքի բաժին, որի ձեռքբերումը «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով չի հիմնավորվում օրինական եկամուտներով, որը ձեռք է բերվել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ, դրա մեջ չի ներառվում այդպիսի գույքի օգտագործումից ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները),
4. գույք, այդ թվում՝ մեկ միավոր գույք, մի քանի միավոր գույք կամ մեկ միավոր գույքի բաժին, որի ձեռքբերումը «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով չի հիմնավորվում օրինական եկամուտներով՝ անկախ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ կամ հետո ձեռք բերված լինելու հանգամանքից, դրա մեջ չի ներառվում այդպիսի գույքի օգտագործումից ստացվածը (պտուղները, արտադրանքը, եկամուտները):